

**ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՏԵՂԱԿԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐՎԱԾ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԵՐԻ ՀՈՉԱԿԱԳԻՐԸ
ՀԱԿԱԳՆՉՈՒՄԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ**

ԵՍ, ԼԻՆԵԼՈՎ ՏԵՂԱԿԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ /ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ,

Հաշվի առնելով Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի և Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարի գնչուների հարցերով հատուկ ներկայացուցչի կողմից բոլոր ընտրված տեղական ներկայացուցիչներին հակագնչուականության դեմ հստակ դիրքորոշում արտահայտելու վերաբերյալ.

Հաշվի առնելով մարդու իրավունքների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների կողմից ստորագրված և/կամ վավերացված փաստաթղթերը, մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան (ՄԻԵԿ) և դրա արձանագրությունները, Եվրոպական (վերանայված) սոցիալական խարտիան, Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիան և ռասիզմի, քսենոֆոբիայի, հակահրեականության և անհանդուրժողականության մասին Հռչակագիրն ու Գործողությունների պլանը (Վիեննայի հռչակագիր), որն ընդունվել է 1993թ. Մարդու իրավունքների համաշխարհային համաժողովին, ինչպես նաև Մտրասբուրգի հռչակագիրը գնչուների մասին (2010թ.) և Եվրոպայի խորհրդի կողմից Գնչուների և շրջիկ ապրելակերպ վարողների ընդգրկման թեմատիկ գործողությունների ծրագիրը.

Հաշվի առնելով Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին (CERD) ՄԱԿ-ի կոնվենցիայի 1-ին հոդվածը, ըստ որի ռասայական խտրականությունը սահմանվում է որպես «ռասայի, մաշկի գույնի, ցեղային, ազգային կամ էթնիկական ծագման հատկանիշների հիմքով ցանկացած տարբերակում, բացառում, սահմանափակում կամ նախապատվություն, որոնք ունեն քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային կամ հասարակական կյանքի ցանկացած այլ բնագավառում մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները չեղյալ հայտարարելու կամ դրանց ճանաչումը, օգտագործումը կամ իրականացումը նվազեցնելու նպատակ կամ հանգեցնում են նման հետևանքների».

Հաշվի առնելով Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողովի (ՌԱԵՀ/ECRI) քաղաքականության պլանավորման մասին թիվ 13 առաջարկությունը հակագնչուականության և գնչուների նկատմամբ խտրականության դեմ պայքարի վերաբերյալ.

Հաշվի առնելով Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածքային իշխանությունների թիվ 333 (2011) բանաձևը գնչուների ներառման վերաբերյալ որպես տեղական և տարածքային իշխանությունների մարտահրավեր, Մասնակցության միջոցով գնչուների տասարդների կարողությունների հզորացման մասին թիվ 366 (2014) բանաձևը և գնչուների և շրջիկ ապրելակերպ վարողների իրավիճակի մասին թիվ 403 (2016) բանաձևը Եվրոպայում աճող ծայրահեղականության, քսենոֆոբիայի և փախստականների հետ կապված ճգնաժամի համատեքստում և Համայնքապետերի գազաթնաժողովի եզրափակիչ հռչակագիրը (2011թ.)

Ճանաչելով, որ հակագնչուականությունը ռասայական խտրականության հատուկ ձև է

Մտապահելով, որ մարդու իրավունքների վերաբերյալ վերոնշյալ միջազգային փաստաթղթերի համաձայն՝ քաղաքական ազատությունները չեն կարող չարաշահվել ռասայի, մաշկի գույնի, էթնիկական պատկանելիության կամ ազգության հիմքով շահագործելու, նախապաշարումներ ստեղծելու կամ խթանելու կամ նշված հիմքերով կանխակալության միջոցով ընտրողների համակրանքը ձեռք բերելու նպատակով

Տեղյակ լինելով տեղական և տարածքային իշխանությունների հատուկ պարտականություններին և պատասխանատվություններին՝ որպես ժողովրդավարական քաղաքական գործընթացի դերակատարների, և հարթակ տրամադրելով քաղաքական որոշումների կայացման գործընթացի համար, ինչպես նաև այդ գործընթացում ամբողջացնելով տարբեր տեսակետներ, դրանով հնարավորություն ընձեռելով հասարակությանը լուծել շահերի և կարծիքների բախման խնդիրները սոցիալական տարբեր խմբերի միջև ավելի շուտ երկխոսության, քան մերժման և հակասության միջոցով, և ընտրելով ներկայացուցիչներ տարբեր մակարդակներում՝ քաղաքական գործընթացներում ակտիվ մասնակցության նպատակով

Համոզված լինելով, որ էթնիկական փոքրամասնությունների, մասնավորապես՝ գնչուների և շրջիկ ապրելակերպ վարողների ներկայացվածությունը քաղաքական գործընթացում ժողովրդավարական գործընթացի բաղկացուցիչ մաս է, քանի որ քաղաքական կուսակցություններն արտացոլում են կամ պետք է արտացոլեն հասարակությունը

ՀԱՆՁՆ ԵՄ ԱՌՆՈՒՄ

- **պաշտպանել** մարդու իրավունքները և ժողովրդավարական սկզբունքները և մերժել գնչուների և շրջիկ ապրելակերպ վարողների նկատմամբ խտրականության, բռնության, ոտնձգությունների, ատելության հրահրման, ատելության խոսքի և հակագնչուականության ցանկացած այլ ձևի դրսևորում,
- **մերժել** որևէ ձևով ցուցադրել, հրապարակել կամ բաժանել կամ հաստատել այնպիսի տեսակետներ և դիրքորոշումներ, որոնք բորբոքում կամ հրահրում են կամ որոնցից

կարելի է ողջամտորեն ակնկալել, որ դրանք կբորբոքեն կամ կհրահրեն թշնամանք կամ բաժանում տարբեր էթնիկական կամ ազգային խմբերի միջև և հաստատակամորեն պայքարել մեր սեփական շարքերում գնչուների և շրջիկ ապրելակերպ վարողների դեմ ցանկացած տրամադրությունների և վարքագծի դեմ,

- **ձեռնպահ մնալ** քաղաքական դաշինքի ցանկացած ձևից կամ որևէ կուսակցության կամ տեղական և տարածքային իշխանության հետ ցանկացած մակարդակում համագործակցությունից , որոնք հրահրում կամ բորբոքում են կամ փորձ են անում բորբոքել ռասայական կամ էթնիկական նախապաշարմունքներ և ռասայական ատելություն,

- **ձգտել** ժողովրդավարության բոլոր մակարդակներում գնչուների և շրջիկ ապրելակերպ վարողների արդար ներկայացվածության ապահովմանը՝ տեղական և տարածքային իշխանության ղեկավարին վերապահելով այս խմբերից տեղական և տարածքային մակարդակում քաղաքական գործառույթներ կատարելու նպատակով թեկնածուների հավաքագրումը խթանելու և աջակցելու հատուկ պատասխանատվություն.

- **ապագայում խոստանալ** ձեռնարկել պատշաճ գործողություններ՝ ապահովելու, որ տեղական և տարածքային իշխանությունների համար աշխատող բոլոր անձինք տեղյակ են վերոնշյալ սկզբունքներին և միշտ կգործեն դրանց համապատասխան:

Տեղեկություններ ստորագրման ընթացակարգի վերաբերյալ

Քաղաքապետարան/տարածք՝

Երկիր՝

Ազգանուն՝

Անուն՝

Քաղաքական հանձնագիր | համայնքապետ կամ ընտրված պաշտոնատար անձ՝

Էլ-հասցե՝

Խնդրում ենք ուղարկել ստորագրված հռչակագիրը քաղաքների և մարզերի գնչուների և շրջիկ ապրելակերպ վարողների ներառման Եվրոպական դաշինքի քարտուղարություն alliance@coe.int էլեկտրոնային հասցեով: